

---

---

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՄԻԼԵՐԵՆԻ ԾԱԳՈՒՄՆԱՅԻՆ  
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

*Հայերենի և հինանատոլիական (խեթալուվական) մեռած լեզուների փոխհարաբերության հարցը մինչև օրս չի եղել առանձին, ընդ որում՝ ամբողջական ուսումնասիրության առարկա: Այդ խմբի լեզուների ի հայտ գալուց և գիտական ճանաչում գտնելուց սկսած՝ տասնամյակներ շարունակ այդ հարցին անդրադարձել են շատ ուսումնասիրողներ, մանավանդ հայոց լեզվի նախագրային շրջանի ընդհանուր պատմության տեսակետից:*

*Լիկերենը խեթալուվական մեռած լեզուներից է, որ լուվերենի հետ կազմում են այդ խմբի լեզուների, այսպես կոչված, լուվալիկիական ենթախումբը: Այն մ. թ. ա. 1-ին հազ. հարավարևմտյան Ասիայի Լիկիա (սեպագիր՝ Lukka) պետության լեզուն է, որը հայտնի է տարածքային երկու տարբերակով (բարբառներով): Առաջինը կոչվում է լիկերեն Ա (բուն լիկերեն, հյուսիսարևելյան և կենտրոնական Լիկիայում), որից մեզ են հասել տապանագիր և նվիրաբերական արձանագրություններ, հրովարտականեր, վիպական տեքստեր և այլն (ամենավաղը՝ մ. թ. ա. V դ.), իսկ երկրորդը՝ լիկերեն Բ (միլերեն, հարավարևմտյան Լիկիայում), որից էլ պահպանվել են պատմական բովանդակության բնագրեր, որոնք ներառում են նաև ծիսական բնույթի հատվածներ (IV դ. 1-ին կես. մ. թ. ա.):*

*Միլերենին ուղղակիորեն կամ երկրորդաբար վերաբերող բավականին սահմանափակ թվով աշխատություններից (ուսումնասիրություններ, բառարաններ, բառացանկեր և այլն) քաղված նյութի սահմաններում հնարավոր է այդ լեզվի և հայերենի միջև մատնանշել ծագումնային առնչությունների վերաբերող որոշ տվյալներ, հիմնականում՝ հնչյունական կազմի, մասամբ՝ ձևաբանական կառուցվածքի վերաբերյալ՝*

---

<sup>1</sup> Հմմտ. Л. С. Б а ю н. Позднеанатолийские языки как источник по хетто-лувийской дописьменной истории (на материале милийской исторической грамматики).– «Вестник Древней истории». М., 1980, <sup>1</sup> 2, с. 11–28; о н а ж е. Некоторые вопросы реконструкции общеанатолийского глагольного строя.– В кн.: Древняя Анатолия. М., 1985, с. 6–21; о н а ж е. Ликийцы в этнокультурной истории древней Анатолии (по лингвистическим данным), I.– В кн.: Эпиграфические памятники и языки древней Анатолии, Кипра и античного Северного Причерноморья. М., 1990, с. 4–83; Л. С. Б а ю н, В я ч. В с. И в а н о в. Рец. на кн.: Investigationes philologicae et comparativae. Gedenkschrift für Heinz Kronasser. Herausgegeben von E. Neu. Wiesbaden: Otto Harrassowitz.– «Вестник Древней истории». М., 1987, <sup>1</sup> 2, с. 211–219; А. В. Д е с н и ц к а я. О хеттском языке.– В кн.: И. Ф р и д р и х. Краткая грамматика хеттского языка. М., 1952, с. 3–40; В я ч. В с. И в а н о в. Хеттский язык. М., 1963; о н ж е. Анатолийские языки.– В кн.: Древние языки Малой Азии. М., 1980, с. 129–160; А. А. К о р о л е в. Хетто-лувийские языки.– В кн.: Языки Азии и Африки. М., 1976, с. 13–

I. Հնչյունական զուգադիպումներ: Առավել ուշադրություն են գրավում հնչյունական այն զուգահեռները, որոնք ներառում են առաջին հերթին ձայնավորները (նաև՝ ձայնորդները) և բաղաձայնները, այնուհետև շատ քիչ դեպքերում՝ մնացածները:

Միլերենի հնչյունական համակարգն այժմ է ընկնում՝ ա) պարզ և ռնգային ձայնավորների հակադրությամբ, որն ունի առավել ցայտուն դրսևորում, քան խեթալուվական մյուս լեզուներում (բացառությամբ, թերևս, լիկերենի), բ) պայթական բաղաձայններն առանձնանում են երկաստիճան հակադրությամբ՝ ի տարբերություն նախամիլերենի, որի համար ենթադրվում է նաև շնչեղների գոյություն, գ) ներկայացնում է ավելի մասնավոր դեպքեր (հետնալեզվային քմային ձայնեղ բաղաձայնի փոխարինում շփականով, քմային շփականի արտահայտում հետնաքմայինով և այլն. տե՛ս ստորև):

1) Ձայնավորները միլերենում, ինչպես ընդհանուր լիկերենում, երկու կարգի են, «մաքուր» (ռնգայնացած)՝ *a, u, e, i*, և «ոչ-մաքուր» (ռնգայնացած)՝ *ã, ù, ê, î*, որոնք ներկայացնում են *a/ã, u/ù, e/ê, i/î* հակադրություն: Իսկ հայերենում դրանք հանդես են գալիս պարզ *a* (*o*), *e* (*e*), *i* (*i*), *u* (*o*) և բարդ՝ երկբարբառակերպ է [*\*tj* (*ē*)]/*(\*eɣ*) ?] [*<* հե. *\*eɣ, \*aɣ/\*oɣ*] և մենաբարբառացած (ձայնավոր դարձած) ու [*<\*n+l* (*\*o+u*) // *l* (*u/ɣ*)?] [*<* հե. *\*ũ/\*ū, \*ō, \*ō/ō, \*op-*] տեսքով<sup>2</sup>:

Հայերենի հետ կարելի է դիտարկել ձայնավորների հետևյալ կարգի ծագումնային զուգադիպումները.

ա) միլ. *a* ~ հայ. *u* (*u/ē*?). հմմտ. խեթ.-լուվ. *a* (*<* հե. *\*ō, \*a*): Օրինակ՝

միլ. *pad-r* «դնել, կարգել, կանգնեցնել» ~ հայ. *սոս-ն*, հետ-ք, ետ-եւ, յ-ետ-ոյ. հմմտ. խեթ.-լուվ. *pad a* «ոտք», *pedan* «տեղ», հուն. *πέδον* «գետին», լատ. *pedes*, (*սեռ. հոլ.*) *pedis* «ոտք», այլն խեթ. *pata* «ոտք», հուն. *πούς, ποδός* «ոտք» և այլն (*<* հե. *\*pōd-* կամ *\*p<sup>[h]</sup>et' -// \*p<sup>[h]</sup>ot'* - [*Бакун, 1980, с. 12; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 43, 57, 154* և այլն]):

Միլ. *da-* «տալ» ~ հայ. *տա-լ* «նույնը». հմմտ. խեթ. *d-* «վերցնել», լիդ. *d-* «տալ», այլն հինդկ. *dādāmi* «տալիս եմ», ավեստ *dadāiti* «տալիս է», հայրսկ. *dadātuv* «(նա պիտի)

93; И. Фридрих. Краткая грамматика хеттского языка. М., 1952; Н. Kronasser. Vergleichende Laut-und Formenlehre des Hethitidischen. Heidelberg, 1956; E. Laroche. Comparaison du Louvite et du Lycien. – “Bulletin de la Sociéité linguistique de Paris”, 1958, t. 53, fasc. 1, pp.159–197, 1960, t.55, fasc. 1, pp. 155–185, 1968, t. 62, fasc. 1, pp. 46–66); I dem. Dictionnaire de la langue louvite (“Bulletin de la Sociéité de linguistique de Paris”, Paris, 1959); Neumann. Beiträge zum Lykischen. – “Die Sprache” (Zeitschrift für Sprachwissenschaft, 1974, Bd. XX, p. 109–114); J. Puhvel. Hittite Etymological Dictionary, vol. 1–2. Berlin–New York–Amsterdam, 1984; J. Tischler. Hethitisches Etymologisches Glossar, mit Beiträgen von G. Neumann und E. Neu, Teil 1, 1983, Lieferung 1–4 (A–K), p. 1–455; 1990, Lieferung 5–6 (L–M), p. 1–243; Teil II, 1991, Lieferung 7 (N), p. 245–355; Teil III, 1991, Lieferung 8 (T, D/1), p. 1–170; 1993, Lieferung 9 (T, D/2), p. 171–328. Innsbruck.

<sup>2</sup> Հմմտ. է. Բ. Աղաջան. Գրաբարի քերականություն, հ. 1 (Մինիսթրնիա. գիրք Ա, Հնչյունաբանություն), Երևան, 1964, էջ 92–96, 134–140, Զ. Գ. Կումանյան. Структура индоевропейских имен в армянском языке (Опыт реконструкции). М., 1978,

с. 40–43.

տա», հուն. δίδομι «տալիս էմ, լատ. dō «տալիս էմ», պրուս. dāst «տալիս է», հայկ. damī «տալիս էմ», լիտվ. dūomi «տալիս էմ» (< հե. \*dō-, կամ \*t'oH- «տալ») [Баюн, 1980, с. 12; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 41, 50, 753]:

Միլ. alb- «սպիտակ, լուսավոր», «մաքուր» ~ հայ. աղ(ա)լ-նի (բրբռ. եղու-նիկ). հմմտ. խեթ. alpa - «ամպ», հուն. ἄλφος «սպիտակ փառ (աչքի վրա և այլն)», լատ. albus «սպիտակ», հրգերմ. albiz «կարապ», հայկ. lebed (< հե. \*albo- «սպիտակ») [հմմտ. Kronas ser, 1956, p. 37; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 65, 783 և այլն]:

բ) Միլ. a ~ հայ. է(\*է)/ա. հմմտ. խեթ. a (< հե. \*eH-): Օրինակ՝

միլ. ta- «դնել. դասավորել», տարբ.՝ ddi-) ~ հայ. դի(ն)-եմ, դի-դար [բրբռ.՝ դարդար (\*դար-դար) «երեխան քնեցնելիս մոր հորդորը»]. հմմտ. խեթ. dai-/tai- (< հե. \*dheH-) [Баюн, 1980, с. 13]:

գ) Միլ. a (լիկ. U e) ~ հայ. է/ե . հմմտ. խեթ. e, լուվ. a<sup>3</sup>: Օրինակ՝

միլ. asxxa «արյուն» ~ հայ. (բրբռ.) էշխ (\*էշխ)/(h)էշխ «եռանդ, տոկուն լինելը», նաև հայ. (բրբռ.) հեշար «արթուն, զգուն(?)». հմմտ. խեթ. eshar, լուվ. ashar [< հե. \*(H)e-shr] (տե՛ս նաև ստորև):

միլ. aba (նաև ebe-) «սա, այս» ~ հայ. (h)ապա, (բրբռ.) ըբբ «(ապա) ուրեմն, դե՛, այդ դեպքում». հմմտ. խեթ. apa, լիդ. (դերանվան հիմք) ebà (< հե. \*e-bho-):

դ) Միլ. a [նախամիլերեն ձայնավորական խմբի մեջ՝ թույլ w կամ j ունեցող՝ uwa կամ aja հնչյուններից առաջ եկած, որ ստացվում է բառաստեղման (հնչաստեղման՝ հապլոլոգիայի) հետևանքով] ~ հայ. ա: Օրինակ՝

միլ. mawa- «ուժեղացնել, ամրացնել» (< \*muwa-wa-) ~ հայ. ա-մու-ր (ամրոց) (?) (< հե. \*moi-ro?). որն, ի դեպ, նույն ածանցն ունի, ինչ լիկ. prñnawa-»կառուցել» (< parna «տուն». հմմտ. հուն. Παρνῶσ(σ)ος «տուն. աստվածների բնակատեղի, Պարոնաս»)՝.

միլ. ma-dra «հասուն՝ բարգավաճ լինելը» (< \*maja-tar) ~ հայ. մած(նում)/մեծ (անալ) (?). հմմտ. խեթ. mekki- «մեծաթիվ», թոխ. U māk, B māka «մեծաթիվ», հհհհ. mahi- «մեծ», mahānt- «մեծ», ա-վեստ. mazant- «մեծ», հուն. μέγας «մեծ», լատ. magnus «մեծ» և այլն (< հե. \*mek'H-) [հմմտ. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 782]:

ե) Միլ. e ~ հայ. ի/ը. հմմտ. խեթ. -լուվ. \*ē (խեթ. e, i, լիդ. i) (< հե. \*ē): Օրինակ՝

միլ. lebi «հարձակում» ~ հայ. (բրբռ.) լպր/ռիկ, լպր/ռոտել «վրա տվող, անկարգ» (՝). հմմտ. խեթ. lip(p)ai- «վնաս տալ՝ հասցնել, վնասել», լիդ. λιφ/bi- (< հե. \*lebh- «բռնել, ճանկել, ազահորեն վերցնել»).

<sup>3</sup> Գտնում են, որ որոշ բառերում (որը հարավարևելյան բարբառային հատկանիշ կարող է լինել) այս դեպքում a-ին համապատասխան է խեթ. e (կամ a), լուվ. a, լիդ. e (< հե. \*e). Տե՛ս Լ. Ս. Баюн. Позднеанатолийские языки как источник по хетто-лувийской дописьменной истории, с. 13.

<sup>4</sup> Լատ Լ. Բայունի՝ w, j բաղադրիչ ունեցող բաղաձայնական խմբերի նման դրվածքը բնորոշ է ոչ միայն լիկիական տարածքին (արեալին), այլև ողջ հնդեվրոպական լեզուներին (տե՛ս նույն տեղում, էջ 13, ծանոթ. 14):

միլ. *wed* «ջուր» (?) ~ հայ. գետ «ջուր». *հմմտ. խեթ. wat, we/it-, լուվ. wid-* (< հե.\* *uēd-*, կամ \**uet'- /ut'-*) [տե՛ս Բաюн, 1980, с. 13; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 273, 671, 942]:

զ) Միլ. *e* ~ հայ. ե/ի . խեթ.-լուվ. լեզուներում՝ բացի լիդերենից, դարձել է *a* (լիդ. ` *i, e* ), ընդ որում միլերենում այն նույնպես հերթագայվում է *i* -ի հետ (< հե. \**ē*): Օրինակ՝

միլ. *wese-/wisi-* ~ հայ. վես, վեսմ (հրան. փոխառություն?) /սեգ (<\*գես-. արմատի շրջում՝). *հմմտ. խեթ. assu-* «լավ, բարի», լուվ. *wasu-*, լիդ. *viš(š)i-* [< հե. \*(*u*)*es-* «նույնը»]:

է) Միլ. *e*-ն որոշ դեպքերում ներկայանում է իբրև վանկային ձայնորդների զարգացման արդյունք՝ *aC-* («անորոշ ձայնորդ+բաղաձայն»), «H- («անորոշ ձայնորդ+լարինգալ») հաջորդականություն»։ Օրինակ՝

միլ. *erei* «դրսից, արտաքուստ» (< \**ɛhei*) ~ հայ. (բրբռ.) արիս «սահման, եզր» (?). *հմմտ. խեթ. a/irha-* (< հե. \**ɛH-*): Հմմտ. նաև խեթ. *erha-//arha-* «սահման. եզր. մարզ», *araha* «շուրջ. դուրս. գծից այն կողմ», *arahaena* «սահմանից այն կողմ՝ շրջակայքում (ապրող)», լատ. *ōra* «սահման. եզր», լատվ. *āra* «սահման. կողմ. եզր», լիտվ. *oras* «օդ. եղանակ» և այլ ն (< հե. \**e/orH-*) [տե՛ս Բաюн, 1980, с. 13; հմմտ. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 206, 743]:

միլ. *elru-* «խոսել, ասել. պատմել» ~ հայ. (բրբռ.) լեր «ձևեր անել, խաբխրել. թյուրիմացության մեջ գցել» [հմմտ. ասացվածք՝ քու լեբեր, իմ ջեբեր «քո ասածները ես լավ էլ գիտեմ՝ հասկանում եմ՝ կռահում եմ» (Մուշ, Ալաշկերտ, իմա՛ ջեբ «գրպան»], այլև հայ. (բրբռ.) լաբառոշ «մեծաբերան»(?). *հմմտ. հուն. λαπίζω* «պարծենալ. գրուխը գովել», հինդկ. *lap-* «շատախոսել, զրարանել. պարծենալ» (<\*հե. *lp-*):

ը) Միլ. *u* ~ հայ. ու/ն. *հմմտ. խեթ.-լուվ. \*u* [< հե.\**o* (անշեշտ). հե. \**o* (շեշտված) > խեթ.-լուվ. \**a*, միլ. *a*]: Օրինակ՝

միլ. *wrttu(wa)-* «հսկա, մեծ. բարձր» ~ հայ. ուրջու «խորթ գավակ», որոշ «գառն(ուկ)», այլև որթ (?), որդ-ի (?), հ-որթ(?) «(բուն՝ նախնական իմաստով) աճ, շարունակություն. վերելք», (բրբռ.) որոճ-իկ «(խխունջի) պատյան՝ թումբ (հիշեցնե՛ն դ) (?)». *հմմտ. լուվ. urat-* [< հե. \**or(r)dh/d* «բարձր. աճել, աճ տալ»], թոխ. *oroc-* «բարձր» [տես Pokorny, 1959, p. 339], այլև

<sup>5</sup> Հմմտ. Գ. Բ. Ջախոնիկյան. Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 114, 207, ն ու յ ն ի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 156:

<sup>6</sup> Միաժամանակ գտնում են, որ չի բացատրվում նմանատիպ բացատրություն լուվերենի դեպքում. լուվ. *a* սովորական *e*-ի փոխարեն, բայերից՝ *elh-* «լվանալ, մաքրել» (< հե. *Պh-*), այլև լուվ. *lahuni-*, խեթ. *lahuwai-* «լվանալ» (հմմտ. հայ. լու-անամ «նույնը», էթե ոչ նաև լոզ/դ-անամ «լողանալ, մաքրվել» (< հե. \**loh-*), անուններից՝ լուվ. *erhu-wa*, որին առնչակից է խեթ.-լուվ. \**arh-/ʔh-* «սահման անցկացնել. սահման, եզր» [հմմտ. հայ. արխ «սահման, եզր» (տե՛ս վերը)] (< հե. \**e/orH-*): Տե՛ս Լ. Ս. Բաюн. Указ. раб., с. 13, прим. 19. Т. В. Гамкрелидзе, Вяч. В. С. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы: реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Тбилиси, I-II, 1984, с. 743.

լատ. *ariēs* (*սեռ. հնլ. arietis*) «ոչխար», պրուս. *eristian* «գառն(ուկ)», հռուս. яръка «ոչխար. մաքրի», արք «գառն(ուկ)», լիտ. *ras* «գառն(ուկ)» և այլն [հմմտ. *Гамкрелидзе, Иванов, 1984, с. 584*]:

թ) Միլ. *u* ~ հայ. *ւ* (վ) (< հե. \**u*, նաև \**u* ունեցող երկրարբառներ՝ \**ou*, \**eu*): Օրինակ՝

միլ. *kuma* «(ծխականորեն) մաքուր» ~ հայ. (բրբռ.) խրվան (*Մուշ, Ալաշկերտ*) «պինդ՝ ամուր, ուժը տեղը», «կենսուրախ, համառ», խվան (*Հավալ*) (*Կարին, Նոր Նախիջևան*) «խանդոտ, բուռն սեր տածող, խորշող»<sup>7</sup>. հմմտ. հինդկ. *komala* «նուրբ, փափուկ», *kum.ra* «երեխա, պատանի» (< հե. \**k<sup>[h]</sup>uent<sup>[h]</sup>o-//suent<sup>[h]</sup>o-*) (?) [հմմտ. *Гамкрелидзе, Иванов, 1984, с. 801–802*]:

ժ) Միլ. *u* (*wa, uwa* հնչասեղման հետևանքով) ~ հայ. *ւ*, վ (< հե. \**u*): Օրինակ՝

միլ. *uba* «ցուլ» ~ հայ. կով, ցուլ (< \**gu-լ*). հմմտ. լիլ. *Uwawa* «նույնը» (< հե. \**k<sup>o</sup>(o)u-* ?).

միլ. *mutala* «ամուր. ուժեղ, պինդ» ~ հայ. մոյթ «նեցուկ, հենարան, ցից» (?). հմմտ. խեթ. *muwattalli* «ամուր, ուժեղ» (< հե. \**me(i)u-thi-* «ամրացնել, ցից, սյուն» ?) [հմմտ. *Ջահուկյան, 1987, էջ 137, 180, 206, 240* և այլն, այլն՝ 2010, էջ 533–534<sup>թ</sup>].

միլ. *zusi* «լույս», «լույսի աստված» ~ հայ. տիւ (*հնչ.՝ \*տիու*) «օր, ցերեկ» (տու-նջեան «ցերեկվա, ցերեկային» և այլն). հմմտ. խեթ. *šiuatt-* «օր», լատ. *dies* «օր», հիբլ. *die* «օր», հինդկ. *dīvā* «օրվա մեջ՝ ընթացքում» և այլն (< հե. \**t'iy-*) [հմմտ. *Гамкрелидзе, Иванов, 1984, с. 475, 793<sup>թ</sup>*]:

ժա) Միլ. *i* ~ հայ. ի/(ո). հմմտ. խեթ. *-լուվ. \*i* (< հե. \**i*): Օրինակ՝

միլ. *ziw-* «աստված» ~ հայ. տիւ-//տու- (*հնչմամբ՝ \*տիու/\*տու*) «լույս, ցերեկ». հմմտ. խեթ. *-լուվ. d'iw-* (< հե. \**diu-*, նոր նշանակմամբ՝ \**t'iy-* «օր, ցերեկ») [հմմտ. *Pokorny, 1959, p. 219; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 791; Иванов, 2007, с. 282–290*].

միլ. *kiki* «պատժել, դատապարտել» ~ հայ. ծեծ «ծեծ, զան. ծեծել» (?). հմմտ. խեթ. *ki-nu-* «(ուժով՝ կոտրելով) բանալ» (< հե. \**ḫiḫi-* «խոր բացվել. բաց լինել») [տե՛ս *Pokorny, 1959, p. 419; Баян, 1980, с. 14. հմմտ. Ջահուկյան, 1987, էջ 125, այլն՝ 2010, էջ 361*]:

ժբ) Միլ. *i* ~ հայ. ի// (\*ե?) (< հե. \**e*): Օրինակ՝

<sup>7</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, Երևան, 2002, էջ 390:

<sup>8</sup> *Խեթ. ձևերի համար տե՛ս An Etymological Dictionary of the Hittite Inherited Lexicon*, pp. 681–682. Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1972, էջ 61:

<sup>9</sup> Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան. Հայերեն աստուած բառի ծագումն ու տիպաբանությունը, Երևան, 2002, ն ու յ ն ի՝ Հ.-Ե. արմատի տարբերակայնությունը և հայերեն աստուած բառի ծագումն ու տիպաբանությունը.– ՊԲՀ, 2003, -3, էջ 242–260, ն ու յ ն ի՝ Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության (Համեմատական-տիպաբանական տարբերակայնություն), 2, Երևան, 2007, էջ 32–37:

միլ. ni «նչ, չ» ~ հայ. մի «նչ, չ». հմմտ. լուվ. ni-s (< հե. \*nē).

միլ. kride «հավատ(ք)» ~ հայ. սիրտ (անել՝ դնել) «հավատ(այ)». հմմտ. խեթ. ki-ir «սիրտ», հուն. κίρ «սիրտ», կելտ. cretim «հավատում եմ» (< հե. \*k<sup>[h]</sup>er-t'-) [հմմտ. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 100, 800]:

ժգ) Միլ. ē ~ հայ. իմ-, են- (ըն-). հմմտ. խեթ. -լուվ. en (< հե. \*eN): Օրինակ՝

միլ. mē-mi «բառ, խոսք» ~ հայ. իմ-անամ «հմանալ, հասկանալ, խորհրդածել» (?). հմմտ. խեթ.-լուվ. men-mi, լատ. emō «գնել, ձեռք բերել», հիբր. em «վերցնել, ընդունել», լիտվ. imti «վերցնել» (< հե. \*men- «մտածել, ենթադրել») [հմմտ. Pokorny, 1959, p. 726–727; Ջահուկյան, 2010, էջ 285].

միլ. ēntr- «ներքին. ներսի կողմ» ~ հայ. ենթ (ընթ < ընդ ?) «տակը, ներսը. ենթ(ա)-, ստոր(ա)-». հմմտ. հուն. ἔντρο «ընդերք, փորոտիք», սլավ. вѣн-отръ «դեպի ներս, մեջը» (< հե. \*entz-).

միլ. ēmu ~ հայ. եմ «ես (բայ. 1-ին դ.՝ եմ)». հմմտ. խեթ. amruk- «իմ, ինձ», լուվ. amu- (նույնը), լիթ. amu (նույնը) [< հե. \*em(e)] [Pokorny, 1959, p. 702; Бацин, 1980, яс.я1 4.яз.я.м. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 286, 383]:

ժդ) Միլ. ā ~ հայ. (ըն-) (ան-, ամ-?) . հմմտ. խեթ.-լուվ. \*an (< հե. \*oN): Օրինակ՝

միլ. -ātu ~ հայ. (ըն) (ըն-կեր, ըն-թամ. ան-ձեռոցիկ, ամ-բողջ, արհ-ամ-արհ-եմ և այլն). հմմտ. խեթ.-լուվ. \*-an-tu (< հե. \*-on-tu-):

ժե) Միլ. ū ~ հայ. -(ըն) (վերջնահանգ -ն ?). հմմտ. խեթ.-լուվ. \*un (< հե. \*uN//\*oN): Օրինակ՝

միլ. -ū (եզ. թ. հայց. հոլ.) ~ հայ. -ն (գոյ. վերջնահանգ -ն՝ գեղմն, ոսն և այլն, որը հավանաբար եղել է եզ. թ. հայց. հոլ. վերջ.). հմմտ. խեթ.-լուվ. \*-an (< հե. \*om) [Հմմտ. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 360]:

ժզ) Միլ. Ī ~ հայ. -(ի)ն (վերջնահանգ -ն ?). հմմտ. խեթ.-լուվ. \*in (< հե. \*iN): Օրինակ՝

միլ. -Ī (եզ. թ. հայց. հոլ.) ~ հայ. -(ի)ն (եզ. թ. տր. հոլ. -ին՝ հարսին, մատին, ոտին և այլն, անցած երբեմնի հայց. հոլովից). հմմտ. խեթ.-լուվ. \*-in (< հե. \*im):

2) Չայնորդները միլերենում, ընդհանուր առմամբ՝ լիկերենում, շատ չեն՝ m, n, l, r, որոնք կարող են հանդես գալ վանկակազմական/ոչ-վանկակազմական գործառոյթով: Սրանց վերաբերյալ առայժմ հնարավոր է միայն մեկ-երկու զուգադիպում նշել: Տվյալ դեպքում ամենավստահելի փաստը, թերևս, հայ. մ ձայնորդի հետ միլ. m-ի զուգադիպումն է:

Միլ. m ~ հայ. մ. հմմտ. խեթ.-լուվ. m (< հե. \*m): Օրինակ՝

միլ. māmre «մեռածներին, մեռած մարդկանց» ~ հայ. մեռանիմ «մեռնել». հմմտ. խեթ. mer- «կորսվել» (< հե. \*mer-/\*mor-) [տե՛ս Pokorny, 1959, p. 735]:

3) Պայթական բաղաձայնները միլերենում ներկայացնում են երկաստիճան ( շնչեղա-գուրկ)համակարգ՝ b/p, d/t , - /k (հետնալեզվային ձայնեղի բացակայությամբ), այսինքն՝

չունի հայերենին բնորոշ շնչեղ խուլեր՝ *ph, th, kh* (հմմտ. *հայ. փ, թ, ք*):

Այս դեպքում կարելի է դիտարկել հետևյալ կարգի ծագումնային զուգադիպումները.

ա) միլ. *p* ~ *հայ. ք* (զրո) . հմմտ. խեթ.-լուվ. \**p* (խեթ. *p*, լիդ. *f*) (<հե. \**p*): Օրինակ՝

միլ. *pre-te* «քեց, վանեց, խփեց» ~ *հայ. հար(կ)-անել, պր(ծ)-նուլ* (?). որոտ(ամ) «որոտայ. ամպ-րոպել» (?). հմմտ. խեթ. *parh-* «քշել, վանել», հինդկ. *pūrta*, *pūrti* «հատուցում. մաս. բաժին», լիտվ. *periù*, *pešyti* «խփել, հարվածել», սլավ. *prъgati* «նույնը» (< հե. \**per-*, ալլև \**p<sup>[h]</sup>er*- «խփել») [Pokorny, 1959, p. 818–819. Հմմտ. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 200]<sup>10</sup>:

բ) Միլ. *p* ~ *հայ. ք* (< հե. \**b<sup>[h]</sup>*- «խփել»): Օրինակ՝

միլ. *ar+pa* «ձող» ~ *հայ. բիր* «մահակ. (հաստ) գավազան» (բրիչ, բր(չ)եմ «փորել»), այլև բահ (< քար-հ) «փորելու գործիք». հմմտ. խեթ. <sup>(GİS)</sup>*arimpa-* «ծիսական առարկա (փայտյա)», հինդկ. *rambhā* «նեցուկ, ձող, անթացուպ» (< հե. \**b<sup>[h]</sup>er-*), էթե ենթադրելի է խեթալուվականում (նաև հնդկականում) արմատի կազմիչ տարրերի ոչ ստանդարտ դրափոխություն (?) [հմմտ. Աճառյան, 1971, էջ 392–393, 452, Ջահուկյան, 1987, 72, 116, 212 և այլն, Kronasser, 1956, p. 39; Баюн, 1980, с. 16; Tischler, 1983, p. 57; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 707, 884 և այլն]<sup>11</sup>.

միլ. *pru-wa* «բարձր, մեծ» ~ *հայ. բարձ-ր* «բարձր, մեծ» (եզ. սեռ. հոլ. բարձու), -բերձ (երկնա)-բերձ «մինչև երկինք բարձրացած». հմմտ. խեթ. *parku-* «բարձր», սվեա. *börzi-* «բարձր», հինդկ. *bṛhánt-* «բարձր», թռի. Ա/Բ *pärk-* «բարձրանալ», հրգերմ. *berg* «սար» և այլն (< հե. \**b<sup>[h]</sup>er*-<sup>[h]</sup>-) [Հմմտ. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 174, 217 և այլն]:

գ) Միլ. *b* ~ *հայ. ւ*. հմմտ. խեթ.-լուվ. \**bh* (սեպագիր՝ *p*) (< հե. \**bh*): Օրինակ՝

միլ. *alb* «սպիտակ», «պայծառ», «մաքուր» ~ *հայ. ալաունք* (\*ալ(ա)ւ-ունք), այլև ալա-սունք) «աստղաբույլ, բազմաստեղք», աղաւնի «աղավնի (թռչունը)». հմմտ. խեթ. *alpa-* «ամպ», հուն. ἀλφός «սպիտակ փառ (աչքի վրա և այլն)», լատ. *albus* «սպիտակ», ումբր. *alfu* «սպիտակ», «սպիտակ (զգեստ)», հրգերմ. *albiz* «կարապ», հսլավ. *lebedi* «կարապ», ռուս. Лебедья «նույնը» (< հե. \**alb<sup>[h]</sup>o-* «սպիտակ», «պայծառ») [Pokorny, 1959, p. 83;

<sup>10</sup> Հայ. *հար(կ)-անել, պր(ծ)-նուլ* ձևերում կ, ծ բաղադրիչների համար նկատենք, որ հե. \**per-* կամ \**p<sup>[h]</sup>er*- արմատը կարող է լրացվել հետնալեզվային խուլ (\**k*) կամ ձայնեղ (\**g*) բաղադրիչով (աճականով), ընդ որում՝ ձայնարձի տարրեր աստիճանով, այն է՝ \**p<sup>[h]</sup>er-g[h]*- , \**p<sup>[h]</sup>er-k[h]*- և այլն. հմմտ. լիտ. *peršu* «(ձեռքը) խնդրել, (աղջիկ) ուզել», լատ. *poscō* «պահանջել, խնդրել, հարցնել» (տե՛ս Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Նշվ. աշխ., էջ 176, 240, J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch, Bd. 1–2. Bern und München, 1959, pp. 819–822. Հմմտ. А. С. Баюн. Նշվ. աշխ., էջ 15, ծանոթ. 30):

<sup>11</sup> Հմմտ. C. Watkins. The American Heritage Dictionary of Indo-European Roots. Boston, 1985, p. 7.

Гамкрелидзе, Иванов, 1984, с. 783; Баян, 1990, с. 14; Ջահուկյան, 2010, էջ 25, 35<sup>12</sup>:

դ) Միլ. *b* ~ *hայ*. *ւ*. *հմմտ. խեթ.-լուվ. ք* (< *հե. \*ք*): Օրինակ՝

միլ. *alba-* «կախարդել, թոփել, դուրսել», «աղաչել, աղերսել, պաղատել» ~ *հայ. աղարթ(ք)* (< աղաչել). *հմմտ. խեթ. alanza-* «կախարդում, կախարդելը», *alza-nz-atar* «կախարդություն, մոգություն», *լուվ. alwa* (*հմմտ. հուն. ἄλω* «հատաչել, տնքալ», «դեսուդեն ընկնել, շուռումուռ գալ» (< *հե. \*alu-/\*aleu-*) [Pokorny, 1959, p. 27–28; Баян, 1980, с. 16; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 808].

միլ. *zbali* «աստվածային» ~ *հայ տիւ «օր, ցերեկ. լույս» (հմմտ. դի-ք «աստվածներ»)*. *հմմտ. խեթ. šiwalli* (< *šiua-* «աստված») (< *հե. \*t'icü-*): [Гамкрелидзе, Иванов, 1984, с. 791, 860; Համբարձումյան, 2007, էջ 32–37 և այլն]:

ե) Միլ. *t* ~ *հայ. տ. հմմտ. խեթ.-լուվ. \*t* (< *հե. \*t'*): Օրինակ՝

միլ. *tube-* «պատժել» ~ *հայ. (բրբռ.) տրփել «գետնով տալ. գետնին զցել»<sup>13</sup>. խեթ.-լուվ. \*turai-* «խփել», *հուն. τῦπτω «խփել», «կտրել, հատել. կոտորել», հինդկ. tópati «խփել»* (< *հե. \*teup-/tup-*)<sup>14</sup>:

զ) Միլ. *d* ~ *հայ. տ. հմմտ. խեթ.-լուվ. \*d* (< *հե. \*d*): Օրինակ՝

միլ. *da-* «տալ» ~ *հայ. տալ «նույնը»*. *հմմտ. խեթ.-լուվ. \*d'a-* «տալ», «վերցնել» (< *հե. \*dō*):

է) Հնարավոր է նաև՝ միլ. *d* ~ *հայ. դ, յ. հմմտ. խեթ.-լուվ. \*dh* (< *հե. \*dh*): Օրինակ՝

միլ. (*d*)*di-* «դնել», «տեղը դնել. տեղավորել, պատկեցնել» ~ *հայ. դնել (\*դի-ն-ել)*. *հմմտ. հինդկ. dhāman-* «(սուրբ) դրվածք. սովորույթ» *հուն. (հուվ.) ἄνα-θημα «ծես. կարգ», Գեմիս «օրենք. վճիռ», հանգլ. dōm «վճիռ» և այլն* (< *հե. \*d<sup>h</sup>e-H-*) [Pokorny, 1959, p. 235–2397; Баян, 1980, с. 16; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 810].

միլ. *d* (միջձայնավորային) ~ *հայ. յ [ներկ. ժամ. եզ. 3-րդ դ.՝ բերել (\*բերեյ)]*. *հմմտ. միլ. -di, mil. խեթ.-լուվ. \*-ti* (< *հե. \*-ti*):

<sup>12</sup> Այս առումով Գ. Ջահուկյանը նշում է հետևյալը. «Սպիտակի անվանումները կապված են գերագանցապես փայլելու գաղափարի հետ, և այդ գաղափարի հնդեվրոպական առատ արտահայտման պայմաններում դժվար է ասել, թե հայերենը ո՞ր տարբերակը կարող էր ընտրած լինել. հավանական են, օրինակ, \*աղբ կամ \*աղալ (\*albho- կամ \*alau- «սպիտակ»). այստեղից են աղանի, թերևս նաև ալա(ւ)տունք «համաստեղություն» (Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, էջ 270): Բացի այդ՝ միլ. (լիկ.) *alb-* բառը, իբրև *ubē* (< \**uba*. լիկ. *wawa* «ցուլ») ձևի հետ՝ *albm ubē* կապակցություն, նշանակում է «կենդանի, որ զոհաբերվում է տասներկու աստվածներին» (*հմմտ. հայ. առասպելներում սպիտակ ցուլերի կամ արջառների զոհաբերման երևույթը*), որն այլ բան չէ, քան էթնամշակութային զուգադիպում):

<sup>13</sup> Հայ. (բրբռ.) տրփել «գետնով տալ. գետնին զցել» բառի արմատը բաղարկվել (կոնտամինացվել) է տալի «գետին» (տալիել, տալիան, տալիարակ և այլն) արմատի հետ:

<sup>14</sup> Կան այս գուգաբանությանը հակառակ օրինակներ, երբ միլ. *t*-ին համապատասխանում է խեթ.-լուվ. *d* (< *հե. \*dh*) . *հմմտ. միլ. ta-* «դնել, գետեղել», խեթ. *dai-* «դնել». *հմմտ. հայ. տա-մ* «տալ, հանձնել» (< *հե. \*dhe-H-*). *տե՛ն* Մ. С. Б а ю н. Позднеанатолийские языки, с. 16.



ը) Հետնալեզվային պայթյալաններից առայժմ քիչ թվով գուցահեռ կարելի է մատնանշել, մանավանդ որ միլերենում դրանք ներկայացնում են ոչ լիարժեք շարք:

միլ. *k* ~ հայ. *p*. հմմտ. խեթ.(-լուվ.) *k<sup>h</sup>* (< *հե*. \**k<sup>h</sup>*): Օրինակ՝

միլ. *ker-*, *kirada* «մաս, բաժին, ~ հայ. քեր(թ)ել «մասնատել, բաժանել» [նան քեր(ծ)ել, քոր-ել, (բրբռ.) խոռ «կիսատ. պակաս. ծայրը թոցրած»(?)]. հմմտ. խեթ.-լուվ. *k<sup>h</sup>er-* (նան *kur-*) «կտրել, կտրատել. մասնատել, անջատել, (<հե. \**k<sup>h</sup>er-*) [հմմտ. Баян, 1980, с. 17; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 200, 706].

միլ. *k* ~ հայ. *ճ*. հմմտ. խեթ. *k* (լուվ., լիկ. *ϕ* ?) (<հե. *k<sup>h</sup>*): Օրինակ՝

միլ. *kiki* «պատժել, դատապարտել» ~ հայ. ճնշել [ճ(ի)-ն-շ-ել ?] «ճգմել, սեղմել». հմմտ. խեթ. *ki-nu-* («ուժով՝ կոտրելով» բանալ) [<հե. *k<sup>h</sup>ei-(nā)* «վճար(ում), հատուցում, վրեժ(խնդրություն)»] [հմմտ. Баян, 1980, с. 17; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 809–810]<sup>15</sup>:

4) Շփականները բուն իմաստով մի քանիսն են՝ *w* (/-, *s/z*, *x* (գրությամբ՝ *q*)/*γ*, որոնք հայերենի հետ ի հայտ են բերում ոչ այնքան տարածված ծագումնալի գուցադիպումներ: Առայժմ հնարավոր է նշել նման կարգի որոշ դեպքեր:

ա) Միլ. *w* ~ հայ. *բ*, *ց* (կ). հմմտ. խեթ.-լուվ. \**w* (< հե. \**g<sup>h</sup>*): Օրինակ՝

միլ. *-we* (բառ-մասնիկ) ~ հայ. բա- [բա-մ (բրբռ.՝ ըբբ «որ ասու մ եմ»), թերևս, նաև բա-ռ (բառ-բառ-ել > բար-բառել) (?). հմմտ. խեթ. *-ua(r)* «որպես թե, իբր(և) թե», *uēriā* «կանչել», լուվ. -իա «ձայնել», պալ. *uer-* «կանչել, (< հե. \**uer-* «խոսել. բարբառել», «կանչել. ձայն տալ»). հմմտ. նաև հուն. εἶρο [Ἔϊρο (< \**uer-ia*)] «ասում եմ. կանչում եմ, ձայն եմ տալիս», լատ. *uerbum* «բառ. խոսք», գոթ. *waurd* «բառ», գերմ. *Wort* «բառ», անգլ. *word* «բառ», ռուս. *дeя(дeет)яx* «ասում է, խոսում է» [հմմտ. Баян, 1980, с. 17, Гамкрелидзе, Иванов, 1984, с. 216, 231, 361, 367].

միլ. *wawa* «ցուլ» ~ հայ. ցուլ (հնչ.՝ \*ցու-լ) «ցուլ»(?), կով «կով». հմմտ. խեթ. *huwarsa* «ցողել. շաղ տալ. արսկել», *warsa* «կաթիլ» [< հե. \**k<sup>h</sup>°(o)u-*] (տես վերը՝ ձայնավորների վերաբերյալ ժա կետը) [հմմտ. Гамкрелидзе, Иванов, 1984, с. 191, 755, 868 և այլն]<sup>16</sup>:

<sup>15</sup> *Ըստ Բայունի՝ խեթ. ki-un- < հե. \* ց<sup>h</sup>ei- «խոր բացվել՝ բաց լինել, դատարկվել», որ իմաստի առումով քիչ հավանական է (նույն տեղում): Ըստ Ջահուկյանի՝ հայ. ճնշել < հե. \**gen-* (որ երբեմն նշվում է հարցականով). Գ. Բ. Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 125, 213, 589, ն ու յ ն ի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 495:*

<sup>16</sup> *Ընդ որում՝ միլերենում և խեթերենում քմային շնչեղ կամ կոկորդային («լարինգալ») \**g<sup>h</sup>* + *w* > *w* տարբերակվածությունը համարվում է հավանական: Ըստ այսմ՝ հայ. ցուլ բառը բուն՝ ամենանախնական իմաստով նշանակում է «ցայտեցնող. բեղմնավորող» (հմմտ. խեթ. *huwarsa* «ցողել. շաղ տալ. արսկել», *warsa* «կաթիլ. շիթ»): Միաժամանակ ենթադրվում է, որ հե. \**k<sup>h</sup>* ~ միլ. *w* անցումը տեղի է ունեցել յ *w* միջին օղակով. հմմտ. հայ. գինի ~ քարթվ. \**γwino-* (վրաց. *γwino*) «գինի» (< հե. \**uoino-*). տե՛ս Լ. Ս. Баян. Նշվ. աշխ., 1980, էջ 17, Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Նշվ. աշխ., էջ 647–655]: Մյուս կողմից, եթե ընդունում ենք միլ. *w* ~ հայ. ց/կ գուցադիպումը, և ըստ այդմ՝ հայ. ցու-լ /կով տարբերակայնությունը, ապա վերջիններիս հետ նույնպիսի հարաբերության մեջ է նաև հայ. բուլ(ա) [սակելի ուշ՝ բուլ(ա)] բառը (բ/կ տարբերակայնության համար հմմտ. հուն. β(ο)ς «կյանք» ~ հայ. կեանք «նույնը»), որպիսով, թերևս, կարելի է վերանայել*

- բ) Միլ. *s* ~ հայ. *ø* (գրո) . հմմտ. խեթ.-լուվ. \**s* (< հե. \**s*): Օրինակ՝  
 միլ. (e)*s*-*tte* «եղավ. (նա) էր» ~ հայ. էր (<\*էյր). հմմտ. խեթ.-լուվ. *es*- «լինել» (< հե. \**es*):
- գ) Միլ. *z* (հնչումով՝ *ts* / *dz*) ~ հայ. *ծ/ձ*. հմմտ. խեթ.-լուվ. *š/t* (< հե. \**d*. նոր նշանակմամբ՝ *t*): Օրինակ՝  
 միլ. *ziwi* «աստված» ~ հայ. տիւ/տու-(ած) (հնչ.՝ \*տիու/\*տոու-ած) «աստված». հմմտ. խեթ. *Šiu*- «(արևի) աստված», լուվ. *tivatt*- «ցերեկվա (լույսի) աստված», *Tiya*- «(արևի) աստված», պալ. *Tiya* «նույնը», լիդ. *↑iv* / *tiv* «աստված» (< հե. \**d̥iēu*- նոր նշանակմամբ՝ \**t̥iēu*-) [հմմտ. Համբարձումյան, 2002, այլն՝ 2007, էջ 32–37]:
- Քմային շփականների դեպքում ևս առայժմ հնարավոր է բերել միայն սահմանափակ տվյալներով գուգադիպումներ:
- դ) Միլ. *q* ~ հայ. *հ* (բրբռ. խ). հմմտ. խեթ.-լուվ. *H* (առաջին շարքի ձայնավորներից առաջ): Օրինակ՝  
 միլ. *qtti*- «սպանել. զոհել» ~ հայ. հատ- «կիսած. հատակտոր» (բրբռ. խատ-նել «շունչը փչել. մեռնել»). հմմտ. խեթ. *hattai*- «խփել, կտրել, կիսել» (< հե. \**H<sub>1</sub>et-i*- «սպանել, զոհարել»՝ *qoh* մատուցել») (հմմտ. Ջահուկյան, 2010, էջ 450).
- միլ. *qidri* «խփել» ~ հայ. խաթար-ել (բրբռ.՝ խաթրել) «տեղաշարժել. խճողել» («վերադասավորել»?). հմմտ. լուվ. *hattari*- «խփել, հարվածել» (< հե. \**H<sub>1</sub>et-r*-)<sup>17</sup>:
- ե) Միլ. *x* ~ հայ. *հ* (?). հմմտ. խեթ.-լուվ. *h(a)*- (մեծ մասամբ՝ հետին շարքի *a* և *u* ձայնավորներից առաջ) (< հե. \**H*): Օրինակ՝  
 միլ. *xlu-sa* ~ հայ. հալ-ածել «հեռացնել, վանել, քշել», թերևս նաև հայ- (կրկնական՝ հայ-հոյ-, հայհոյել «կոպել, վիրավորական խոսք ասել») «ծաղրական բացականչություն» (?). հմմտ. խեթ. *halluwai*- «վիճարանել. գժտվել, կոպել, հայհոյել» (< հե. \**H<sub>2</sub>alu*-).
- միլ. *xuma*- (նաև *kuma*-) ~ հայ. (բրբռ.՝ Մուշ, Ալաշկերտ) հումա «չեփված, չլճակված՝ հում (կաթի) սեր». «հում սեր»(?) [< հե. \**koum*- / \**kum*- «մաքուր», ավելի նախնականը՝ հե. \**seu*-/\**su*- «մզել, ճզմել (հեղուկ). հյուր (քամել), դուրս հանել՝ բերել»]. հմմտ. հինդկ. *sunóti* «մզում է, ճզմում է», ավեստ. *hunaoitī*, այլն հինդկ. *sutá*- «քամած, ճզմելով դուրս բերված», հիբլ. *suth* «հյուր. կաթ», հվգերմ. *sou*, հանգլ. *sēaw* «հյուր». իբրև պաշտամունքային (աստվածային) խմիչք՝ հմմտ. հինդկ. *sóma*-

վերջինիս փոխառություն լինելը. և ըստ այսմ՝ կարելի է ենթադրել, որ այն բնիկ բուլ (բուլ) արմատն է, որը հետագայում բաղադրվել (կոնտամինացվել) է -այ վերջածանցով փոխառյալ *buγa* «ցուլ» բառի հետ [հմմտ. Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 483, Գ. Բ. Ջահուկյան. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 139]:

<sup>17</sup> Գ. Ջահուկյանը, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, հայ. խաթարել «քանդել, ավերել, քայքայել» (նաև խաթել «նվազել, թուլանալ»), այլն խացակ (բրբռ. խածուկ) «բժավոր, պտավոր, արատավոր, հիվանդ, տկար», խացակել (նաև հացակել) «ծախսել, սպառել, պակասեցնել» և սրանցից բաղադրված ձևերի համար, իբրև ընդհանուր արմատի խաց-/խաթ-/խած-/հաց տարբերակներ, թեականով (հարցականով) դիտում է ծագած հե. \**khath*- (\**skēth*-, \**skōth*-) արմատից. տե՛ս Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 149, 215, այլն՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 308, 323:

«ստմա (խմիչք)», ավեստ. *haoma-* «հաումա (խմիչք)» [հմմտ. *Pokorny, 1959, p. 912; Баян, 1980, с. 18; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 653*]<sup>18</sup>.

միլ. *qaja* «զոհարան. զոհասեղան» ~ հայ. հա' (հա- ?) «հավանության նշան` բառ», հն', (բրբռ.) խո(ւ) «զարմանքի` հարցման բառ-նշան» (?). հմմտ. հիեր. լուվ. *haiami*, խեթ. *hā-* «հավատալ» (*hāmi* «հավատում եմ»), այլն լատ. *ōmen* «(նախա)նշան. հանդիսություն, ծես» (հե. <\*Ho-) [Баян, 1980, с. 18; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 805]<sup>19</sup>:

զ) Միլ. *x(x)* ~ հայ. *ϕ* (զրո). հմմտ. խեթ. *h, րիկ. ք/հ* (<\*aH<sub>2</sub>-): Օրինակ`

միլ. *mlu-xx-* (<\*m<sub>l</sub>d-u-aH<sub>2</sub> «աղոթել. երկրպագել») ~ հայ. մաղթեմ (<\*m<sub>l</sub>-th-?) «աղոթել». հմմտ. խեթ. *mal dai-* «աղոթք անել, մաղթել. երկրպագել աստվածներին` զոհ մատուցելով», լիտվ. *meldžiù* «աղոթում եմ», հւլավ. *moliti* «աղոթել», հռուս. *молить* «աղոթել` զոհաբերմամբ», հրգերմ. *meldōn* «տեղ հասցնել. հայտնել», գերմ. *melden* «տեղեկացնել. հաղորդել», անգլ. *meld* «ծանոթացում» (<\*meld<sup>[h]</sup>- «աղոթել` զոհաբերմամբ») [Pokorny, 1959, p. 722; Баян, 1980, с. 18; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 803; Ջահուկյան, 1987, էջ 84, 138, այլն` 2010, էջ 25, 35]<sup>20</sup>:

II. Բառա(ձևա)կազմական զուգադիպումներ: Մրանք մեծ մասամբ վերաբերում են անվանական և բայական հիմքերի կազմությանը, մասամբ` բառերի կամ արմատների ածանցմանը:

ա) Գոյականական հիմքի -a/-i անցում կամ պահպանում (?) ~ հայ. -ի/-ա (?) : Օրինակ`

միլ. *xaba* «ոչխար», ընդհ. լուվ. \*H<sub>2</sub>awi- «նույնը» ~ հայ. հովի-ւ (<հե.\*Hou-i-) [Баян, 1980, с. 21; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 159, 577 և այլն].

միլ. *qla-* «սրբավայր. տաճար» ~ հայ. կլայ «բերդ. ամրոց» (հմմտ. Հռոմկլայ). լուվ. *hila* «(տաճարի եկեղեցու) դուռ», այլն հուն. (դոր.) *κλῆίς* «բանալի», լատ. *clavis* «բանալի», *claudō* «փակել, կողպել», հւլավ. *ključī* «բանալի» և այլն //սեմ. \*k-l-` «պահել, կասեցնել. բաց չթողնել». ակկադ. *kalū* «պահել, կանգնեցնել, արամ. *kālā*` «խանգարել, խոչընդոտել», արաբ. *kala'a* «պահել, հսկել» և այլն (<\*k<sup>[h]</sup>laH<sub>2</sub>- «փակել, կողպել. բանալի») [Баян, 1980, с. 18; Гамкрелидзе, Иванов, 1984, с. 874–875]:

բ) Ուղղական հոլովի ընդհ. խեթ.-լուվ.\*- s (<հե.\* s) վերջավորության կորուստն անդրադարձնում է ոչ միայն միլերենի, այլև հայերենի վրա. միլերենում բառը վերջանում է ձայնավորով: Օրինակ`

